

Հ Ա Շ Վ Ե Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

**Հայաստանի Հանրապետության հանրային հատվածի ներքին աուդիտի համակարգի
2019թվականի**

**(համաձայն «Ներքին աուդիտի մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 4-րդ մասի 4-րդ
կետի)**

2019 թվականի հաշվետու տարում ներքին աուդիտի համակարգ ներդրած և տարեսկզբին առկա ՀՀ հանրային հատվածի թվով 224 մարմիններից՝ համակարգը շարունակել է գործել թվով 220 մարմիններում, որից ՀՀ Սահմանադրությամբ և ՀՀ օրենքներով նախատեսված թվով 52 պետական (այսուհետ՝ ՊՄ), ինչպես նաև թվով 46 տեղական ինքնակառավարման մարմիններում (այսուհետ՝ ՏԻՄ) ներքին աուդիտն իրականացվել է կազմակերպության կառուցվածքում գործող ներքին աուդիտի ստորաբաժանման միջոցով (տե՛ս Ցանկ N 1, Ցանկ N 2), իսկ թվով 122 գյուղական համայնքներում ներքին աուդիտի իրականացման աշխատանքները պատվիրակված են մասնավոր կազմակերպության (տե՛ս Ցանկ N 3): 2018 թվականի համեմատությամբ՝ 2019 թվականին ներքին աուդիտի համակարգ ներդրած ՏԻՄ և գյուղական համայնքների թվաքանակը չի փոխվել, իսկ ՊՄ թվաքանակը՝ ավելացել է 1-ով, սակայն պայմանավորված միաձուլման և վերակազմակերպման գործընթացներով, պակասել՝ 5¹-ով:

¹Մասնավորապես՝

2019թ. հաշվետու տարում ներքին աուդիտի համակարգէ ներդրվել «ՀՀ արդարադատության ակադեմիա» ՊՈԱԿ-ում, սակայն պայմանավորված «Կառավարության կառուցվածքի և գործունեության մասին» ՀՀ օրենքում փոփոխություններն լրացումներ կատարելու հանգամանքով, միաձուլման ձևով վերակազմակերպել են՝

➤ ՀՀ Էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների ու ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարությունները՝ ստեղծելով ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն,

«Ներքին աուդիտի մասին» ՀՀ օրենքի կիրարկումն ապահովող ենթաօրենսդրական ակտերի մշակմանն ու համակարգի ներդրմանն ուղղված միջոցառումների շրջանակում 2019 թվականի ընթացքում կատարվել են հետևյալ աշխատանքները.

➤ Ուսումնասիրվել են ՀՀ հանրային հատվածի ներքին աուդիտի ոլորտում առկա խնդիրները և մշակվել դրանց լուծմանն ուղղված միջոցառումներն ու ՀՀ հանրային հատվածի ներքին աուդիտի ոլորտի բարեփոխումների 2019-2023թթ. գործողությունները, որոնք այնուհետև ընդգրկվել են ՀՀ կառավարության 2019 թվականի նոյեմբերի 28-ի N 1716-L որոշմամբ հաստատված «Պետական ֆինանսների կառավարման համակարգի 2019-2023 թվականների բարեփոխումների ռազմավարությունը և պետական ֆինանսների կառավարման համակարգի բարեփոխումների 2019-2023 թվականներին իրականացվելիք գործողությունների ծրագրում»:

➤ Պետական ֆինանսների կառավարման համակարգի բարեփոխումների շրջանակներում ընդգրկված ՀՀ հանրային հատվածի ներքին աուդիտի ոլորտի բարեփոխումներին առնչվող միջոցառումներից մեկը՝ կատարողականի աուդիտի կարևորության շեշտադրում և տարեկան ծրագրի 30%-ի չափով գործնական կիրառման ապահովումն է, որը ենթադրում է՝ կատարողականի աուդիտի իրականացման մեթոդաբանության հաստատում, ներքին աուդիտի օրենսդրությունում կատարողականի աուդիտի դերի մեծացում, ՀՀ հանրային հատվածի կազմակերպություններում գործող ներքին աուդիտորների կատարողականի աուդիտի իրականացման հմտությունների զարգացում, ինչի նպատակով տարվել են համապատասխան նախապատրաստական աշխատանքներ: Հատկապես, Համաշխարհային Բանկի աջակցության շրջանակներում 2019 թվականի մարտի 25-27-

-
- ՀՀ մշակույթի, ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի ու ՀՀ կրթության և գիտության նախարարությունները՝ ստեղծելով ՀՀ կրթության գիտության մշակույթի և սպորտի նախարարություն,
 - ՀՀ գյուղատնտեսության ու ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարությունները՝ ստեղծելով ՀՀ էկոնոմիկայի նախարարություն,
 - ՀՀ սփյուռքի նախարարությունը միացման ձևով վերակազմակերպել և միացվել է ՀՀ վարչապետի աշխատակազմին:

Ինչպես նաև նույն փոփոխություններով անվանափոխվել է՝

- ՀՀ բնապահպանության նախարարությունը՝ ՀՀ շրջակա միջավայրի նախարարության,
- ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարությունը՝ ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարության:

ը «Կատարողականի աուդիտի իրականացման մեթոդաբանության» թեմայով կազմակերպվել է եռօրյա դասընթաց՝ ՀՀ ֆինանսների նախարարության ներքին աուդիտի կարգավորման և համակարգման համար պատասխանատու ստորաբաժանման աշխատողների և ՀՀ հանրային հատվածի 17 մարմինների ներքին աուդիտորների համար: Դասընթացի ավարտին Համաշխարհային Բանկի փորձագետի աջակցությամբ ՀՀ ֆինանսների նախարարության ներքին աուդիտի կարգավորման և համակարգման համար պատասխանատու ստորաբաժանման և Երևանի քաղաքապետարանի ներքին աուդիտի ստորաբաժանման աշխատողների հետ համատեղ իրականացվել են կատարողականի աուդիտի փորձնական աշխատանքներ:

➤ 2019 թվականի մարտի 18-ի ՀՀ ֆինանսների նախարարի N 262-Ն հրամանով ՀՀ ֆինանսների նախարարի 2012 թվականի փետրվարի 17-ի «Հայաստանի Հանրապետության հանրային հատվածի ներքին աուդիտի ձեռնարկների և ներքին աուդիտի կանոնակարգի մշակման ուղեցույցները հաստատելու և Հայաստանի Հանրապետության ֆինանսների և էկոնոմիկայի նախարարի 2002 թվականի դեկտեմբերի 30-ի թիվ 934-Ն հրամանն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 143-Ն հրամանում կատարված փոփոխություններով ուժը կորցրած է ճանաչվել հրամանի 1.1-1.3 կետերը, համաձայն որի դադարեցվել է ինչպես ներքին աուդիտի միասնական կառավարման համակարգի շահագործումը, այնպես էլ համակարգի օգտագործողի իրավասության տրամադրումը:

Ներքին աուդիտի համակարգի գործունեության շրջանակում 2019 թվականի ընթացքում իրականացված աշխատանքներն են.

ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հրապարակվել են «ՀՀ ֆինանսների նախարարության կողմից տրված հանրային հատվածի ներքին աուդիտորի որակավորում ունեցող անձանց ցանկերը» և «Հայաստանի Հանրապետությունում ներքին աուդիտի ոլորտում ընդունելի՝ միջազգայնորեն ճանաչված ինչպես նաև այլ կառույցների կողմից տրված աուդիտորի որակավորում ունեցող անձանց ցանկերը» (այսուհետ՝ Ցանկեր): Վերջիններիս տվյալների համաձայն 2019 թվականի տարեսկզբին Ցանկերում ընդգրկված թվով 273 աուդիտորներից, թվով 239-ը, իսկ 2019 թվականի ավարտին թվով 361 աուդիտորներից թվով 220-ը՝ հանդիսացել են հանրային հատվածի

կազմակերպությունների աշխատողներ²:

Հիմք ընդունելով «Ներքին աուդիտի մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 4-րդ մասի 2-րդ կետը և առաջնորդվելով ՀՀ ֆինանսների նախարարի 2014 թվականի օգոստոսի 21-ի «Ներքին աուդիտորների շարունակական մասնագիտական վերապատրաստման կարգը հաստատելու մասին» N 541-Ն հրամանով հաստատված կարգի պահանջներով՝ 2019 թվականին շարունակվել է տարեսկզբին Ցանկերում ընդգրկված 273 ներքին աուդիտորների շարունակական մասնագիտական վերապատրաստման դասընթացների կազմակերպումը, ընդ որում՝ 2019 թվականին առաջին անգամ այն կազմակերպվել է նոր ձևաչափով, որի նպատակով նախատեսվել է նախ՝

1. լրացուցիչ 8 թեմաներ՝ բոլոր որակավորված, այդ թվում՝ ստորաբաժանման ղեկավարի պարտականություններ իրականացնող ներքին աուդիտորների համար՝ ըստ հայեցողության,

2. պարտադիր 14 թեմաներ, որից 8-ը չկրկնվող՝ ինչպես ներքին աուդիտի ստորաբաժանման ղեկավարի պարտականությունները կատարող ներքին աուդիտորների, այնպես էլ բոլոր որակավորված ներքին աուդիտորների համար՝ առանձին-առանձին:

2019 թվականին կազմակերպվել են թվով 24 շարունակական մասնագիտական վերապատրաստման դասընթացներ, որից ընտրված լրացուցիչ թեմաների համար թվով 13, իսկ պարտադիր թեմաների համար՝ 11 դասընթացներ:² 2019 թվականին կազմակերպված շարունակական մասնագիտական վերապատրաստման դասընթացներին մասնակցել են թվով 226 որակավորված ներքին աուդիտորներ, ընդ որում թվով 83-ը՝ ներքին աուդիտի ստորաբաժանման ղեկավարի պարտականությունները կատարողներ: Շարունակական մասնագիտական վերապատրաստում անցած թվով 226 աուդիտորներից թվով 206-ը՝ հանրային հատվածի աշխատողներ են, այդ թվում՝ 61-ը ՊՄ-ի, 44-ը ՏԻՄ-ի և 1-ը՝ «Ներքին աուդիտի մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 5-րդ կետով սահմանված ներքին աուդիտի գործառույթների կարգավորման և համակարգման համարպատասխանատու

²Հանրային հատվածի կազմակերպությունների ներքին աուդիտի աշխատանքներում ընդգրկված որակավորված աուդիտորների հանրագումարը՝ (215) տարբերվում է Ցանկերում ընդգրկված համապատասխան թվից (220), քանի որ հաշվառված չեն Ցանկերում ընդգրկված հղիության ու ծննդաբերության կամ մինչև 3 տարեկան երեխայի խնամքի արձակուրդում գտնվող 4 և «Ներքին աուդիտի մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 5-րդ կետով սահմանված ներքին աուդիտի կարգավորման և համակարգման համար պատասխանատու ստորաբաժանման ներքին աուդիտորի որակավորում ունեցող 1 աշխատողները:

ստորաբաժանման, իսկ թվով 20 աուդիտորներ ընդգրկված չեն հանրային հատվածի կազմակերպությունների ներքին աուդիտի գործառույթի իրականացման աշխատանքներում: Շարունակական մասնագիտական վերապատրաստման դասընթացներին մասնակցած աուդիտորների թվաքանակը 2018 թվականի համեմատությամբ պակասել է 14-ով կամ 5.8 %-ով, սակայն 2017 թվականի համեմատությամբ ավելացել է 11-ով կամ 5.1 %-ով:

Շարունակական մասնագիտական վերապատրաստման դասընթացին չեն մասնակցել հաշվետու ժամանակաշրջանի սկզբում Ցանկերում ընդգրկված թվով 47 աուդիտորներ, որից թվով 42 աուդիտորներ վերապատրաստման դասընթացին չներկայանալու, թվով 1-ը վերաորակավորվելու և թվով 4-ը հղիության ու ծննդաբերության կամ մինչև 3 տարեկան երեխայի խնամքի արձակուրդում գտնվելու պատճառով: Նշված ցուցանիշը 2017-2018 թվականների համեմատությամբ բարելավվել է, 2018 թվականին պակասելով 27-ով կամ 39.7 %-ով, իսկ 2017 թվականին՝ 16-ով կամ 28.1 %-ով, որը հավաստում է ինչպես որակավորված աուդիտորների մասնագիտական կարողությունների բարձրացման, այնպես էլ կազմակերպվող դասընթացների արդյունավետության մասին:

Շարունակական մասնագիտական վերապատրաստման թեստավորմանը մասնակցել է թվով 221 աուդիտոր, որից թվով 1 աուդիտոր՝ ՀՀ ֆինանսների նախարարի 21.08.2014 թվականի N 541-Ն հրամանով հաստատված կարգի 32-րդ կետի 3-րդ ենթակետի պահանջներին հավաստող փաստաթղթերով: Շարունակական մասնագիտական վերապատրաստման թեստավորմանը մասնակցած թվով 221 աուդիտորներից թվով 201 աուդիտորներ, այդ թվում՝ 158-ը ՊՄ-ի, 42-ը ՏԻՄ-ի և 1 -ը «Ներքին աուդիտի մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 5-րդ կետով սահմանված պատասխանատու ստորաբաժանման աշխատողներ են, իսկ թվով 20-ը՝ չեն հանդիսանում հանրային հատվածի կազմակերպությունների գործող աուդիտորներ:


Շարունակական մասնագիտական վերապատրաստման թեստավորմանը մասնակցած աուդիտորների թվաքանակը 2018 թվականի համեմատությամբ պակասել է 8-ով կամ 3.5%-ով, սակայն 2017 թվականի համեմատությամբ ավելացել է 10-ով կամ 4.7 %-ով:

Շարունակական մասնագիտական վերապատրաստման դասընթացի թեստավորմանը մասնակցած թվով 221 աուդիտորներից թվով 219-ը հաղթահարել են

թեստավորման նվազագույն շեմը, իսկ ՊՄ-ի թվով 2 աուդիտորներ չեն հաղթահարել սահմանված նվազագույն շեմը: Թեստավորման նվազագույն շեմը չհաղթահարած աուդիտորների քանակը 2018 թվականի համեմատությամբ ավելացել է 1-ով, իսկ 2017 թվականի համեմատությամբ՝ 2-ով: Շարունակական մասնագիտական վերապատրաստում չանցած կամ թեստավորմանը չմասնակցած կամ թեստավորման նվազագույն շեմը չհաղթահարած աուդիտորների որակավորումը դադարեցվել և նրանց անունները հանվել է ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հրապարակվող հանրային հատվածի ներքին աուդիտորի որակավորում ունեցող անձանց Ցանկերից, բացառությամբ այն աուդիտորների, որոնք հաշվետու ժամանակահատվածում վերաորակավորվել, կամ գտնվել են հղիության ու ծննդաբերության կամ մինչև 3 տարեկան երեխայի խնամքի արձակուրդում: Այսպիսով, 2019 թվականի ընթացքում հանրային հատվածի ներքին աուդիտորի որակավորումը կորցրել են Ցանկերում ընդգրկված թվով 49 աուդիտորներ, որից թվով 41-ը շարունակական մասնագիտական վերապատրաստման դասընթացին չմասնակցելու, թվով 6-ը թեստին չներկայանալու և թվով 2-ը թեստավորման նվազագույն շեմը չհաղթահարելու հետևանքով: Նշված ցուցանիշը 2017-2018 թվականների համեմատությամբ ևս բարելավվել է, 2018 թվականին պակասելով 29-ով կամ 37.2 %-ով, իսկ 2017 թվականին՝ 12-ով կամ 19.7 %-ով:

Ստորև գծապատկերում ներկայացված է կազմակերպված շարունակական մասնագիտական վերապատրաստման դասընթացներին, թեստավորմանը մասնակցած, ինչպես նաև ներքին աուդիտորի որակավորումը կորցրած աուդիտորների 2017-2019 թվականների համեմատական ամփոփ ցուցանիշները:

Շարունակական մասնագիտական վերապատրաստման դասընթացներին և թեստավորմանը մասնակցած, որակավորումը կորցրած աուդիտորների թվաքանակը



«Ներքին աուդիտի մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 4-րդ մասի 3-րդ կետի պահանջի կիրարկման շրջանակներում ՀՀ կառավարության 2014 թվականի փետրվարի 13-ի N 176-Ն որոշմամբ հաստատված ներքին աուդիտորի որակավորման կարգի համաձայն՝ 2019 թվականի ընթացքում կազմակերպվել է թվով 10 որակավորման քննություն: Որակավորման քննություններին, ներառյալ վերաորակավորվելու համար, հայտ են ներկայացրել թվով 98 դիմորդներ: Նշված ցուցանիշը 2018 թվականի համեմատությամբ ավելացել է 36-ով կամ 58.1%-ով, սակայն 2017թվականի համեմատությամբ նվազել է՝ 36-ով կամ 26.9%-ով: Քննությանը մասնակցելու համար հրավիրված թվով 98 դիմորդներից ներկայացել են թվով 89 դիմորդներ: Որակավորման համար սահմանված շեմը հաղթահարել են թվով 57 դիմորդներ և նրանց շնորհվել է հանրային հատվածի ներքին աուդիտորի որակավորում և ներառվել է ՀՀ ֆինանսների նախարարության կողմից տրված հանրային հատվածի ներքին աուդիտորի որակավորում ունեցող անձանց ցանկում:


«Ներքին աուդիտի մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 4-րդ մասի 5-րդ կետի պահանջի կիրարկման շրջանակներում, ՀՀ կառավարության 2014 թվականի

փետրվարի 13-ի N 176-Ն որոշմամբ հաստատված N 1 հավելվածի 2-րդ գլխի 5-րդ և 6-րդ կետերի պահանջներին համապատասխան «Հայաստանի Հանրապետությունում ներքին աուդիտի ոլորտում ընդունելի՝ միջազգայնորեն ճանաչված ինչպես նաև այլ կառույցների կողմից տրված աուդիտորի որակավորում ունեցող անձանց ցանկերում» ընդգրկվելու նպատակով, 2019 թվականի ընթացքում ստացվել է 82 դիմում, որից 81-ը բավարարվել են, նրանց շնորհվել է հանրային հատվածի ներքին աուդիտորի որակավորում և ընդգրկել Հայաստանի Հանրապետությունում ներքին աուդիտի ոլորտում ընդունելի՝ միջազգայնորեն ճանաչված ինչպես նաև այլ կառույցների կողմից տրված աուդիտորի որակավորում ունեցող անձանց ցանկերում, իսկ 1 դիմում՝ ներկայացված վկայականը ՀՀ կառավարության 2014 թվականի փետրվարի 13-ի N 176-Ն որոշմամբ հաստատված N 1 հավելվածի 2-րդ գլխի 5-րդ և 6-րդ կետերում ներառված չլինելու հիմքով՝ մերժվել:

Նշված ցուցանիշը 2018 թվականի համեմատությամբ ավելացել է 77-ով, իսկ 2017 թվականի համեմատությամբ՝ 73-ով: Այս հանգամանքը թերևս խոսում է ներքին աուդիտորի մասնագիտության գրավչության բարձրացման մասին:

Համադրելով ՀՀ հանրային հատվածի ներքին աուդիտորի որակավորում ունեցող անձանց Ցանկերում ընդգրկվածության վերաբերյալ վերը նշված դինամիկայի վերլուծության արդյունքները, ստացվում է, որ 2019 թվականի տարեվերջի դրությամբ առկա է հանրային հատվածի ներքին աուդիտորի որակավորում ունեցող Ցանկերում ընդգրկված թվով 361 աուդիտոր, որը նախորդ 2017-2018թթ. համեմատությամբ ավելացել է համապատասխանաբար 88-ով կամ 32.2%-ով և 49-ով կամ 15.7%-ով:

Ստորև գծապատկերում բերված են հանրային հատվածի ներքին աուդիտորի որակավորում ունեցող և Ցանկերում ընդգրկվածության 2017-2019 թվականների ամփոփ ցուցանիշները:




2019 թվականի տարեվերջին Ցանկերում ընդգրկված 361 որակավորված ներքին աուդիտորներից թվով 220-ը, ներառյալ հղիության ու ծննդաբերության կամ մինչև 3 տարեկան երեխայի խնամքի արձակուրդում գտնվող թվով 4, ինչպես նաև «Ներքին աուդիտի մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 5-րդ կետով սահմանված ներքին աուդիտի կարգավորման և համակարգման համար պատասխանատու ստորաբաժանմաններին աուդիտորի որակավորում ունեցող թվով 1 աշխատողներ՝ ընդգրկված են հանրային հատվածի կազմակերպությունների ներքին աուդիտի գործառույթի իրականացման աշխատանքներում, իսկ թվով 141 աուդիտորներ ընդգրկված չեն հանրային հատվածի կազմակերպությունների ներքին աուդիտի գործառույթի իրականացման աշխատանքներում:

Չնայած նրան, որ 2019 թվականին Ցանկերից հանրային հատվածի ներքին աուդիտի գործնական աշխատանքներում ընդգրկված աուդիտորների թվաքանակը նախորդ 2017-2018 թվականների համեմատականաբար է, ընդ որում 2018 թվականի համեմատությամբ՝ 17-ով կամ 7.3 %-ով, իսկ 2017 թվականի համեմատությամբ՝ 34-ով կամ 13.6 %-ով, սակայն ավելացել է հանրային հատվածի ներքին աուդիտորի որակավորում ունեցող և հանրային հատվածի ներքին աուդիտի գործնական

աշխատանքներում չընդգրկված աուդիտորների թվաքանակը, համապատասխանաբար 2018 թվականին՝ 107-ով կամ 314.7 %-ով և 2017 թվականին՝ 92-ով կամ 187.7 %-ով:

Ստորև ներկայացված գծապատկերը արտացոլում է Ցանկերում ընդգրկված ՀՀ հանրային հատվածի ներքին աուդիտորի որակավորում ունեցող անձանց ներգրավվածության համեմատական ցուցանիշները 2017-2019 թվականների համար, ըստ ՀՀ հանրային հատվածի ներքին աուդիտի ոլորտում աշխատող, ՀՀ հանրային հատվածի կազմակերպությունների ներքին աուդիտի գործնական աշխատանքներում ընդգրկված և ՀՀ հանրային հատվածի կազմակերպությունների ներքին աուդիտի գործնական աշխատանքներում չընդգրկված անձանց:




Համաձայն ՀՀ հանրային հատվածի կազմակերպություններից ՀՀ ֆինանսների նախարարության կողմից վարվող ներքին աուդիտորների գրանցամատյանի տվյալների թարմացման նպատակով 2019 թվականին ստացված տեղեկատվության՝ ՀՀ հանրային հատվածի կազմակերպություններում ներքին աուդիտորների հաստիքների ընդհանուր թիվը՝ ներառյալ հղիության ու ծննդաբերության կամ մինչև 3 տարեկան երեխայի

խնամքի արձակուրդում գտնվողները, կազմել է թվով 347 աուդիտոր, այդ թվում 260-ը՝ ՊՄ-ում, 87-ը՝ ՏԻՄ-ում, իսկ համալրված հաստիքների ընդհանուր թիվը՝ ներառյալ հղիության ու ծննդաբերության կամ մինչև 3 տարեկան երեխայի խնամքի արձակուրդում գտնվողները, կազմել է թվով 265 աուդիտոր, որից 198-ը՝ ՊՄ-ում, այդ թվում 167-ը որակավորված և 31-ը ուսուցանվող և 67-ը՝ ՏԻՄ-ում, այդ թվում 52-ը որակավորված և 15-ը ուսուցանվող³:

2019 թվականին հանրային հատվածի կազմակերպությունների ներքին աուդիտի աշխատանքներում ընդգրկված աուդիտորների թվաքանակը 2017-2018 թվականների համեմատ պակասել է, ընդ որում 2018 թվականին՝ 25-ով կամ 8.6 %-ով, իսկ 2017 թվականին՝ 27-ով կամ 9.2 %-ով:

Ստորև ներկայացված գծապատկերը արտացոլում է 2017-2019 թվականների համապատասխան ցուցանիշների դինամիկան:




2019 թվականին 2017-2018 թվականների համեմատությամբ փոփոխության է

³Այս և հաջորդ բաժիններում ներկայացված վերլուծության համար հիմք են հանդիսացել սույն հաշվետվության վերջում առկա լիազոր մարմնին ներկայացվող տարեկան ամփոփ հաշվետվության այլ բաղկացուցիչ աղյուսակների տվյալները, առանց «Ներքին աուդիտի մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 5-րդ կետով սահմանված ներքին աուդիտի կարգավորման և համակարգման համար պատասխանատու ստորաբաժանման ներքին աուդիտորի որակավորում ունեցող աշխատողի:


ենթարկվել նաև հանրային հատվածի կազմակերպությունների ներքին աուդիտի ստորաբաժանումներում ներգրաված որակավորված և ուսուցանվող ներքին աուդիտորների թվաքանակը: Այսպես՝ 2019 թվականին գործող որակավորված ներքին աուդիտորների թվաքանակը 2018 թվականի համեմատությամբ պակասել է 19-ով կամ 8.0%-ով, իսկ ուսուցանվող աուդիտորների թվաքանակը պակասել է՝ 6-ով կամ 11.5%-ով, մինչդեռ ժամանակ 2017 թվականի համեմատությամբ՝ գործող որակավորված ներքին աուդիտորների թվաքանակը պակասել է 39-ով կամ 15.1%-ով, սակայն ուսուցանվող աուդիտորների թվաքանակը ավելացել է 12-ով կամ 35.3%-ով:

ՀՀ հանրային հատվածի ներքին աուդիտի աշխատանքներում ընդգրկված որակավորված և ուսուցանվող ներքին աուդիտորների հարաբերակցությունն՝ ըստ 2017-2019 թվականների, ունի հետևյալ պատկերը:



ՀՀ հանրային հատվածի կազմակերպություններում ներքին աուդիտի ստորաբաժանումների համալրված թվով 265 աուդիտորներից, թվով 198-ը, ներառյալ՝ հղիության ու ծննդաբերության և մինչև 3 տարեկան երեխայի խնամքի արձակուրդում գտնվող թվով 4 անձիք, հանդիսանում են ՊՄ, իսկ թվով 67-ը՝ ՏԻՄ ներքին աուդիտի


ստորաբաժանումների աշխատողներ: 2019 թվականին 2018 թվականի համեմատությամբ ՊՄ աուդիտորների թիվը պակասել է 27-ով կամ 12.0%-ով, իսկ ՏԻՄ աուդիտորների թվաքանակը ավելացել է 2-ով կամ 3.1%-ով, իսկ 2017 թվականի համեմատությամբ՝ ՊՄ աուդիտորների թվաքանակը պակասել է 30-ով կամ 13.1%-ով, իսկ ՏԻՄ աուդիտորների թվաքանակը ավելացել է 3-ով կամ 4.7 %-ով:



2019 թվականին փոփոխություն է արձանագրվել նաև ՊՄ և ՏԻՄ որակավորված և ուսուցանվող աուդիտորների քանակական հարաբերակցության մեջ: 2019 թվականի հաշվետու տարում ՊՄ որակավորված աուդիտորների թվաքանակը 2018 թվականի համեմատությամբ պակասել է 24-ով կամ 12.6%-ով, իսկ 2017 թվականի համեմատությամբ՝ 43-ով կամ 20.5%-ով, ուսուցանվող աուդիտորների թվաքանակը 2018 թվականի համեմատությամբ պակասել է 3-ով կամ 8.8%-ով, իսկ 2017 թվականի համեմատությամբ ավելացել՝ 13-ով կամ 72.2 %-ով:

ՊՄ որակավորված և ուսուցանվող աուդիտորների հարաբերակցությունն՝ ըստ 2017-2019 թվականների, ունի հետևյալ պատկերը.


**Որակավորված և ուսուցանվող ներքին աուդիտորների
հարաբերակցությունը ՊՄ-ներում**



2019 թվականի հաշվետու տարում 2017-2018 թվականների համեմատությամբ ավելացել է ՏԻՄ որակավորված աուդիտորների թվաքանակը՝ համապատասխանաբար 2018 թվականի համեմատությամբ՝ 5-ով կամ 10.6%-ով, իսկ 2017 թվականի համեմատությամբ՝ 4-ով կամ 8.3%-ով, սակայն պակասել է ուսուցանվող աուդիտորների թվաքանակը՝ 2018 թվականի համեմատությամբ՝ 3-ով կամ 16.7%-ով, իսկ 2017 թվականի համեմատությամբ՝ 1-ով կամ 6.2%-ով:

ՏԻՄ որակավորված և ուսուցանվող աուդիտորների հարաբերակցությունն՝ ըստ 2017-2019 թվականների, ունի հետևյալ պատկերը.

**Որակավորված և ուսուցանվող ներքին աուդիտորների
հարաբերակցությունը ՏԻՄ-ներում**



2019 թվականի հաշվետու տարում «Ներքին աուդիտի մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 4-րդ մասի 5-րդ կետի պահանջի կիրարկման շրջանակներում, ՀՀ կառավարության 2014 թվականի փետրվարի 13-ի N 176-Ն որոշմամբ հաստատված N 2 հավելվածի 1-ին կետի պահանջներին համապատասխան «Հանրային հատվածում ներքին աուդիտ իրականացնելու համար որակավորում ունեցող կազմակերպությունների ցանկում» ընդգրկվելու նպատակով ներքին և (կամ) արտաքին աուդիտի գործունեությամբ զբաղվող կազմակերպություններից ստացվել է 14 հայտ, որից 12-ը բավարարվել են և այդ կազմակերպությունները ընդգրկվել են «Հանրային հատվածում ներքին աուդիտ իրականացնելու համար որակավորում ունեցող կազմակերպությունների ցանկում», տարեսկզբի 3 կազմակերպությունից՝ 2019 թվականի տարեվերջին հասնելով 15 կազմակերպության: Նշված ցուցանիշը 2018 թվականի համեմատությամբ ավելացել է 11-ով, իսկ 2017 թվականի համեմատությամբ՝ 12-ով:

2019 թվականի հաշվետու տարվա ավարտին՝ կազմակերպության կառուցվածքում գործող ՀՀ հանրային հատվածի ՊՄ և ՏԻՄ ներքին աուդիտի ստորաբաժանման միջոցով իրականացված և ներքին աուդիտի աշխատանքների վերաբերյալ ստացված

տարեկան ամփոփ հաշվետվությունների⁴, ինչպես նաև հաշվետվությանը կցված N 10 հավելվածի 3-րդ՝ «Ներքին աուդիտի միջավայրի միավորները» աղյուսակի ուսումնասիրությունից պարզ է դառնում, որ 2019 թվականի ընթացքում պլանավորվել է աուդիտի ենթարկել ՊՄ և ՏԻՄ 4668 միավորներից 1495 միավորը կամ 32.0%-ը և 21575 գործառույթից 8054 գործառույթը կամ 39.4%-ը, համապատասխանաբար 2018 թվականին 4870 միավորներից՝ 1422-ը կամ 29.2%-ը և 22502 գործառույթից՝ 8074-ը կամ 35.9%-ը, և 2017 թվականին 4956 միավորներից՝ 1508-ը կամ 30.4%-ը, 22778 գործառույթից՝ 8943-ը կամ 39.3%-ը: Նշված ցուցանիշը 2018 թվականի համեմատությամբ ավելացել է՝ ըստ միավորների 73-ով կամ 5.1%-ով և ըստ գործառույթի՝ 430-ով կամ 5.3%-ով, իսկ 2017 թվականի համեմատությամբ նվազել է, համապատասխանաբար՝ 13-ով կամ 0.9%-ով և 439-ով կամ 4.9%-ով: 2019 թվականին փաստացի աուդիտի է ենթարկվել ՊՄ և ՏԻՄ 1439 միավոր և 6652 գործառույթ կամ աուդիտի միջավայրի 30.8%-ը: Նշված ցուցանիշը, եթե 2018 թվականի համեմատությամբ ըստ միավորների ավելացել է 106-ով կամ 7.9%-ով և նվազել ըստ գործառույթի 830-ով կամ 11.1%, ապա 2017 թվականի համեմատությամբ նվազել է ինչպես ըստ միավորների՝ 24-ով կամ 1.6%-ով, այնպես էլ ըստ գործառույթի՝ 1961-ով կամ 22.8 %-ով:

Նշված ցուցանիշները ըստ ՊՄ և ՏԻՄ ստորաբաժանումների կողմից ներկայացրած տվյալների կազմում են. 2019 թվականի հաշվետու տարում ՊՄ-ի 3340 միավորներից պլանավորվել է աուդիտի ենթարկել 1159-ը կամ միավորների 34.7%-ը և 17331 գործառույթից՝ 7054-ը կամ 40.7%-ը, 2018 թվականի համապատասխանաբար ըստ միավորների 28.9% կամ 3435 միավորներից՝ 993-ը, ըստ գործառույթի՝ 36.3% կամ 17674 գործառույթից 6411-ը, 2017 թվականին՝ ըստ միավորների 30.6% կամ 3518 միավորներից 1076-ը, ըստ գործառույթի 40.1% կամ 18010 գործառույթի 7229-ը:

⁴ ՀՀ հանրային հատվածի պետական և տեղական ինքնակառավարման թվով 98 մարմիններից, 2019թ. հաշվետու տարվա համար կատարվածներքին աուդիտի վերաբերյալ հաշվետվություն են ներկայացրել թվով 93 մարմիններ, որից թվով 83-ում, այդ թվում՝ պետական 46 և տեղական ինքնակառավարման 37 մարմիններում իրականացվել են ներքին աուդիտի աշխատանքներ, իսկ պետական՝ 4 և տեղական ինքնակառավարման՝ 6 մարմիններում ներքին աուդիտի աշխատանքներ՝ չեն իրականացվել: Միաժամանակ թվով 5 մարմիններ, այդ թվում՝ պետական թվով 2 (ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն, ՀՀ արդարադատության նախարարություն) և տեղական ինքնակառավարման թվով 3 (Արմավիրի համայնքապետարան, Դիլիջանի համայնքապետարան, Գյուլագարակի համայնքապետարան) մարմիններ՝ ՀՀ ֆինանսների նախարարության 04.03.2020թ. N /27-2/3256-2020 և 06.03.2020թ. N 01.1/27-2/3350-2020 ուղարկված գրություններին չեն արձագանքել և 2019թ. հաշվետու տարվա համար կատարվածներքին աուդիտի վերաբերյալ հաշվետվություն չեն ներկայացրել:

2019թվականին փաստացի աուդիտի է ենթարկվել ՊՄ 1140 միավոր կամ միավորների 34.1% և 5380 գործառույթ կամ 31.0 %, 2018 թվականին ըստ միավորների 27.9% կամ 960 միավոր, ըստ գործառույթի 33.0% կամ 5837 գործառույթ, իսկ 2017 թվականին ըստ միավորների 30.1 % կամ 1060 միավոր, ըստ գործառույթի 38.3% կամ 6897 գործառույթ:

Միևնույն ժամանակ նշված ցուցանիշները համաձայն ՏԻՄ ներքին աուդիտի ստորաբաժանումներից ստացված տվյալների՝ 2019 թվականին հաշվետու տարում 1328 միավորներից պլանավորվել է աուդիտի ենթարկել 336 միավորներ կամ միավորների 25.3% և 4244 գործառույթից՝ 1450 գործառույթ կամ 34.2%, 2018 թվականի համապատասխանաբար ըստ միավորների 29.9% կամ 1435 միավորներից՝ 429-ը, ըստ գործառույթի՝ 34.4% կամ 4828 գործառույթից՝ 1663-ը, 2017 թվականին՝ ըստ միավորների 30.0% կամ 1438 միավորներից՝ 432-ը, ըստ գործառույթի 36.0% կամ 4768 գործառույթից՝ 1716-ը:

2019 թվականին փաստացի աուդիտի է ենթարկվել ՏԻՄ 299 միավոր կամ միավորների 22.5% և 1272 գործառույթ կամ 30.0 %, 2018 թվականին ըստ միավորների 26.0% կամ 373 միավոր, ըստ գործառույթի 34.1% կամ 1645 գործառույթ, իսկ 2017 թվականին՝ ըստ միավորների 28.0% կամ 403 միավոր, ըստ գործառույթի 36.0% կամ 1716 գործառույթ:

Համադրելով այս ցուցանիշները ստացվում է, որ 2019 թվականի ՊՄ և ՏԻՄ փաստացի կատարողականն ըստ միավորների կազմում է 96.2%, իսկ ըստ գործառույթի՝ 78.2%, 2018 և 2017 թվականներին համապատասխանաբար ըստ միավորների՝ 93.7% և 97.0%, իսկ ըստ գործառույթի՝ 92.7% և 96.3%: Նույն ցուցանիշները կազմում են՝ ՊՄ-ների դեպքում ըստ միավորների՝ 2019 թվականին՝ 98.3%, 2018 թվականին՝ 96.7%, 2017 թվականին՝ 98.5%, ըստ գործառույթի՝ 2019 թվականին՝ 76.3%, 2018 թվականին՝ 91.0%, 2017 թվականին՝ 95.4%, իսկ ՏԻՄ-երի դեպքում՝ ըստ միավորների՝ 2019 թվականին՝ 89.0%, 2018 թվականին՝ 86.9%, 2017 թվականին՝ 93.3%, ըստ գործառույթի՝ 2019 թվականին՝ 87.7%, 2018 թվականին՝ 98.9%, 2017 թվականին՝ 100.1%:

2019 թվականի տարեկան ծրագրով ՊՄ և ՏԻՄ ներքին աուդիտի

ստորաբաժանումները պլանավորել են իրականացնել 1518 առաջադրանք⁵, համապատասխանաբար 2018 թվականի 2680⁶ և 2017 թվականի 1692 փոխարեն, որը նախորդ երկու տարիների համեմատությամբ նվազել է՝ ընդ որում 2018 թվականին՝ 1162 կամ 43.3%, իսկ 2017 թվականին՝ 174 կամ 10.3%: Նշված ցուցանիշը ՊՄ-ների դեպքում կազմել է՝ 2019 թվականին 1175 առաջադրանք, 2018 թվականին 2249 առաջադրանք, 2017 թվականին 1260 առաջադրանք, իսկ ՏԻՄ-երի դեպքում՝ 2019 թվականին՝ 343, 2018 թվականին՝ 431, 2017 թվականին՝ 432 առաջադրանքներ:

2019 թվականի տարեկան ծրագրով պլանավորված թվով 1518 առաջադրանքից թվով 1511-ը պլանավորվել է որպես աուդիտորական, իսկ թվով 7-ը՝ խորհրդատվական ծառայություն մատուցելու առաջադրանքներ, նույն ցուցանիշները համապատասխանաբար 2018 թվականին՝ թվով 2677 և 3, իսկ 2017 թվականին՝ թվով 1682 և 10: Նշված ցուցանիշը ՊՄ-ների դեպքում կազմել է՝ 2019 թվականին՝ 1172 և 3 առաջադրանք, 2018 թվականին՝ 2248 և 1 առաջադրանք, 2017 թվականին՝ 1255 և 5 առաջադրանք, իսկ ՏԻՄ-երի դեպքում՝ 2019 թվականին՝ 339 և 4, 2018 թվականին՝ 429 և 2, 2017 թվականին՝ 427 և 5 առաջադրանքներ:

Համաձայն տարեկան ամփոփ հաշվետվությանը կցված N 10 հավելվածի 5-րդ «Ներքին աուդիտի ստորաբաժանման կողմից պլանավորված և իրականացված առաջադրանքների քանակը» աղյուսակով ներկայացված տվյալների՝ փաստացի իրականացված աուդիտորական առաջադրանքների քանակը 2019 թվականին առանց լրացուցիչ (ոչ պլանային) կատարված առաջադրանքների՝ կազմել է 1347 առաջադրանք, համապատասխանաբար 2018 թվականի՝ 2356 և 2017 թվականի՝ 1585 առաջադրանքների փոխարեն, որը ինչպես 2018 թվականի, այնպես էլ 2017 թվականի համեմատությամբ նվազել է՝ համապատասխանաբար 1009-ով կամ 42.8%-ով, և 238-ով կամ 15.0%-ով: Նշված ցուցանիշը 2019 թվականին ՊՄ-ների դեպքում կազմել է՝ 1048, 2018 թվականին՝ 1987, 2017 թվականին՝ 1213 առաջադրանքներ, իսկ ՏԻՄ-երի դեպքում՝ 2019 թվականին՝ 299, 2018 թվականին՝ 369, 2017 թվականին՝ 372

⁵Առաջադրանքները, կախված աուդիտի տեսակից, կարող են միաժամանակ ընդգրկել միավորներ և գործառույթներ:

⁶Այս և ստորև ներկայացվող վերլուծության համեմատական (ամփոփ և ՊՄ) տվյալներում՝ 2018թ. ինչպես պլանավորված, այնպես էլ փաստացի իրականացրած առաջադրանքների քանակային աճը պայմանավորված է ՀՀ պաշտպանության նախարարության ներքին աուդիտի ստորաբաժանման կողմից ներկայացված տարեկան ամփոփ հաշվետվությանը կցված N 10 հավելվածի բաղկացուցիչ աղյուսակների տվյալներով, համաձայն որի 2018թ. հաշվետու տարում պլանավորվել է 1255 առաջադրանք, փաստացի կատարել՝ 1111 առաջադրանք, որից 1029 իրականացված գնումների աուդիտ:

առաջադրանքներ:

Համաձայն N 10 հավելվածի 5-րդ «Ներքին աուդիտի ստորաբաժանման կողմից պլանավորված և իրականացված առաջադրանքների քանակը» աղյուսակով ներկայացված տվյալների ՊՄ և ՏԻՄ ներքին աուդիտի ստորաբաժանումների կողմից 2019 թվականին իրականացվել է լրացուցիչ (ոչ պլանային) թվով 82 աուդիտորական առաջադրանք, աճը 2018 թվականի համեմատությամբ՝ 44 կամ 115.8 %, իսկ 2017 թվականի համեմատությամբ՝ 61 կամ 290.5 %: 2019 թվականին իրականացված լրացուցիչ թվով 82 աուդիտորական առաջադրանքից թվով 79-ը կամ 96.3%-ը իրականացվել է ՊՄ-ներում, իսկ թվով 3-ը կամ 3.7 %-ը՝ ՏԻՄ-ում:

Համադրելով փաստացի, ներառյալ լրացուցիչ, կատարված աուդիտորական առաջադրանքների ցուցանիշները ստացվում է, որ 2019 թվականին թերակատարվել է ՊՄ և ՏԻՄ ներքին աուդիտի ստորաբաժանումների կողմից 2019 թվականի համար պլանավորված աուդիտորական առաջադրանքները՝ 82-ով կամ 5.4 %-ով, այդ թվում ՊՄ-ներում 45-ով կամ 3.8%-ով, իսկ ՏԻՄ-ում՝ 37-ով կամ 10.9%-ով:

